# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

19. *ապրիլի. 2016թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից՝ Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու թիվ 07-09 որոշումները :

Առդիր՝ 4 էջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ**

*Կատ.* '

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնք, հասցե գ.Սարահարթ

հեռ. 094077616
էլ փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

« 15 » ապրիլի 2016 թվականի N 7 - Ն

### ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի «ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ Սարահարթ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 4891 հոդվածով սահմանված պլանը պակասեցնել 200000 դրամով: Ճշտված պլանը սահմանել 4337500 դրամ:

բ/ « Քաղաքացիական պաշտպանություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի 4819 տնտեսագիտական դասակարգման հոդվածով սահմանված պլանը ավելացնել 200000 դրամով: Ճշտված պլանը սահմանել 200000 դրամ:

2. Սարահարթ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 24-Ն որոշման թիվ 2, թիվ 3 և թիվ 6 հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1.ա և 1.բ կետերի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Մարկոսյան Տարոն | [signature] | | |
| Սուքիասյան Սեյրան | [signature] | | |

Սարահարթ համայնքի ղեկավար __________ Վ. Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

15. ապրիլի. 2016թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 8

ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համայնքի ավագանին ընդունեց ի գիտություն 2016 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման արդյունքների մասին համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումը:

Եկամուտների գծով - 7731,0

Ծախսերի գծով - 4689,1

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Սահակյան Լյովա | | | |
| Մանուկյան Նազար | | | |
| Սուքիասյան Սեյրան | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |
| Մարկոսյան Տարոն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

15 . ապրիլի . 2016թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 15 >> ապրիլի 2016թ. N 9

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարահարթ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 13 Ա որոշմամբ հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացրած գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Մանուկյան Նազար | [signature] | | |
| Սուքիասյան Սեյրան | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Մարկոսյան Տարոն | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ

Կատ. '

ՀՀ Լոռու մարզի

Սարահարթ համայնքի ավագանու

2016 թվականի ապրիլի 15-ի N 9 որոշման

# Ց Ու Ց Ա Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Փիլոյան Նվերիկ Մերուժանի 20 000 հազար դրամ

2. Գալստյան Կիմա Գառնիկի 20 000 հազար դրամ

3. Սիմոնյան Արկադի Կարապետի 50 000 հազար դրամ

4. Հովսեփյան Արտյոմ Գագիկի 50 000 հազար դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 140 000 հազար դրամ:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Վ.Փիլոյան